# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի ապրիլի 17-ի թիվ 3 արձանագրությամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ԿՀԳԿ-ԳՀԱՊՁԲ-25/03**

«Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ -ի կարիքների համար սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԿՀԳԿ-ԳՀԱՊՁԲ-25/03 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** Գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրում անհրաժեշտություն է առաջացել փոփոխություն կատարելու:

**Փոփոխության նկարագրություն:** տեխնիկական բնութագիրը անհրաժեշտ է շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ՝

«Մանրադիտակ՝

•Խոշորացումը՝ 40X- 1000X,

•Օպտիկական գլխիկ՝ օկուլյարների թեքությունը 300, 3600 հորիզոնական պտտվող, դիոպտրիայի կարգավորմամբ,

•Օկուլյարները՝ Լայնադաշտային, WF 10x/18 մմ միջակայքում,

•Օբյեկտիվների թմբուկը՝ 4 օբյեկտիվների համար,

•Օբյեկտիվները՝ 4x/0.10, 10x/0.25, 40x/0.65 (S), 100x/1,25 (S, Oil): Դիտման հարթակը՝ 140x140 մմ, աշխատանքային տիրույթ՝ 75x50 մմ,

•Ֆոկուսավորվող անիվ՝ Կոաքսիալ կոպիտ և նուրբ, 25 մմ տիրույթ, 2 միկրոն ճշտությամբ,

•Կոնդեսոր՝ Abbe Bright field, n.A. 1.25, iris դիաֆրագմա, ֆիլտրի սկուտեղ,

•Լուսավորումը՝ 6V/20W լույսի աղբյուր ունեցող S-LED լամպ, լուսավորման կարգավորումով,

•Սնուցումը՝ 100-240V, 50/60 Hz:

Տեսախցիկ՝

•CMOS տեսախցիկ 16 MP,

•Տեսախցիկի լուծման սկավառակ (12 cm),

•USB 3.0 cable (1.8 m),

•0.50x Մանուալ կառավարվող ոսպնյակի ադապտեր, 23,2 մմ-ից 30,0 մմ աչքի խողովակի ադապտերի օղակ,

•Կալիբրացիոն սլայդ X քանոն 1մմ/100 Div.x 0,01 մմ:

Տեսախցիկը պետք է համապատասխանի և աշխատի մանրադիտակի հետ միասին:

Առաքումը կատարվում է Պարույր Սևակ 7 հասցեյում, առաքելուց մատակարումը կատարել նշված սենյակների տարածքում: Կատարել սարքի փորձարկում:»:

**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Վ. Էլոյանին:

Հեռախոս՝ +374 98 389 689 (ներքին հեռախոսահամար՝ 11)
Էլ. փոստ՝ l.hayrapetyan@promotion.am
Պատվիրատու՝ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ